

Վահագն Հակոբյան

ԱԼԵՔՍԱՆԴՐ ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ-ՔԱՂԱՔԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՄԻՆԶԲՈՒՇԵՎԻԿՅԱՆ ՓՈՒԼԸ

Քանալի բառեր – սպեցիֆիկ, բուլշևիկ, դաշնակցական, խորհրդային, ազգային, սոցիալ-դեմոկրատիա, մարքսիզմ, կուսակցություն, հեղափոխություն, քաղաքական:

«Մեծ Լենինի հավատարիմ աշակերտ», «բուլշևիկյան հին գվարդիայի աննկուն մարտիկ», «սովետական պետության ականավոր գործիչ» և այլն¹: Ահա այսպիսի բնութագրումներով են խորհրդային շրջանում սկսվել Ալեքսանդր Մյասնիկյանին (Ա. Մարտունի) նվիրված բոլոր, հաճախ միանման աշխատությունները: Բնականաբար այսօր դրանք ժամանակավրեպ արտահայտություններ են, բայց պարզ է մի բան, որ ընդհանուր առմամբ խորհրդային տարիներին Սփյուռքում և հետխորհրդային շրջանում հայ իրականության մեջ Ալեքսանդր Մյասնիկյանի նկատմամբ եղել է և կա զուսպ, դրական վերաբերմունք: Կարծում ենք՝ դա պայմանավորված է 1920-ական թթ. սկզբին խորհրդային Հայաստանի համար ծանր շրջանում կառավարության ղեկը ստանձնելուց հետո Ա. Մյասնիկյանի գլխավորած խմբի կողմից երկրում վիճակը կայունացնելու, տանելի պայմաններ ստեղծելու ուղղությամբ ձեռնարկված քայլերի, ինչպես նաև նրա ողբերգական մահվան և այլ պատճառներով:

Անշուշտ, խորհրդային շրջանում Ա. Մյասնիկյանի մասին գրվել են բազմաթիվ գրքեր, հրապարակվել փաստաթղթերի ժողովածուներ ու հուշեր, սակայն, այնուամենայնիվ, նրա կյանքի և գործունեության վաղ շրջանի մի քանի հարցեր քաղաքական պատճառներով անտեսվել կամ պատշաճ կերպով չեն ներկայացվել, ուստի և կարոտ են լրացուցիչ ուսումնասիրության ու լուսաբանման: Դրանցից հատկապես նշելի են Ա. Մյասնիկյանի Հայ հեղափոխական դաշնակցության (<<Դ) և սպեցիֆիկների* հետ առնչությունների հարցերը:

Ներկայացվելիք խնդիրների առանձնահատկություններին ծանոթացնելու, նյութը դյուրըմբռնելի դարձնելու համար, մեր կարծիքով նախ անհրաժեշտ է ներկայացնել խորհրդային շրջանում Ա. Մյասնիկյանի քաղաքական կերպարի ձևավորման համառոտ պատմությունը:

Ա. Մյասնիկյանի կյանքի ու հասարակական-քաղաքական գործունեության ներկայացման խնդիրը առաջանում է նրա ողբերգական մահից հետո (1925 թ. մարտ): Այդ գործը հիմնականում իրենց վրա են վերցնում նրա պատանեկության և երիտասարդության տարիների ընկերները²: Դեռևս ձևավորման փուլում գտնվող խորհրդային ամբողջատիրական համակարգի ու քաղաքական գրաքննության պայմաններում Ց. Խանգադյանը կարողանում է իր աշխատանքում իրավացիորեն նշել, որ Ա. Մյասնիկյանը իր գործունեության սկզբում անդամակցել է Դաշնակցությանը, ապա 1906 թ. ամռանը՝ ՍԴԲՀ-ին, բայց այդ հանգամանքը արգելք չի հանդիսացել, որ նա միաժամանակ աշխատի Ռուսաստանի սոցիալ-դեմոկրատական բանվորական հայ կազմակերպության (ՌՍԴԲԿ) մեջ՝ հարելով Վ. Լենինի գլխավորած թևին³: Նույն ժամանակ Ա.

¹ Տե՛ս Մնացականյան Ա., Ալեքսանդր Մյասնիկյանի զինվորական գործունեությունը 1917-1921 թթ., // Առանձնատիպ ՀՍՍՌ ԳԱ Տեղեկագրից, № 3, Ե., 1947, էջ 77, Մնացականյան Ա., Ալեքսանդր Մյասնիկյան (Ալ. Մարտունի), Ե., 1955, էջ 5, Դարիբջանյան Գ. Բ., Ալեքսանդր Ֆյոդորովիչ Մյասնիկյան (Ալ. Մարտունի), Ե., 1956, էջ 3 և այլն:

* Խոսքը վերաբերում է Սոցիալ-դեմոկրատական բանվորական հայ կազմակերպության (ՍԴԲՀ) անդամներին, ովքեր բուլշևիկների կողմից սպեցիֆիկ էին անվանվել հայ իրականության յուրահատուկ պայմանները հաճախ ընդգծելու համար: Այդ կուսակցությունը ստեղծվել էր 1903 թ.:

² Կարինյան Վ. Եվ Սիմոնյան Դ., Ալ. Մարտունի-Մյասնիկյան (նյութեր կենսագրության համար), Ե., 1925, Խանգադյան Ց., Ալեքսանդր Մյասնիկյան-Մարտունի (Այոռչա), (բնույթագրման փորձ), Ե., 1926:

³ Խանգադյան Ց., նշվ. աշխ., էջ 8-9: Նշենք, որ Ց. Խանգադյանի 1963 թ-ին հրատարակված հոդվածների ժողովածուի մեջ արդեն Ա. Մարտունու Դաշնակցությանը անդամակցելու հատվածները բացակայում են: Տե՛ս Խանգադյան Ց., Հոդվածների ժողովածու, Ե., 1963, էջ 116-117, Փիրումեան Ս., Ալեքսանդր Ֆեոդորովիչ

Կարինյանն ու Ղ. Սիմոնյանը իրենց գրքույկի հավելվածում, Ա. Մարտունու կենսագրության վերաբերյալ տեղեկություններ ներկայացնելով, ավելի շրջահայաց են գտնվում և ընդամենը հիշատակում են նրա ազգային, հեղափոխական հովերով տարվելու և ՍԴԲՀ ու միաժամանակ ՌՍԴԲԿ շարքերում աշխատանք տանելու մասին¹: Իր հերթին Ս. Փիրումյանը Ա. Մյասնիկյանին նվիրված կենսագրականում, լռության մատնելով նրա ազգային շարժումներին, կուսակցություններին հարելու հարցը, ընդամենը նշում է, որ 1906 թ. ամռանը նա անդամակցել է ՌՍԴԲԿ-ին և Բաքվում ակտիվորեն մասնակցել վերջինի Բաքվի կազմակերպության ու Հայ սոցիալ-դեմոկրատական կազմակերպության աշխատանքներին²:

Իրար հետ ոչ միանշանակ, հաճախ մրցակցային ու լարված հարաբերություններ ունեցող երկու կուսակցություններին Ա. Մյասնիկյանի միաժամանակ անդամակցելու (գործունեության երկվության) մասին տեղեկատվությունը առաջ է բերում տարակարծություններ և քննարկումներ: Դրանք 1920-ական թվականների երկրորդ կեսին արդիական, սուր բնույթ են ստանում, քանի որ զուգորդվում են Ա. Մյասնիկյանի մահից հետո ուժեղացած ներկուսակցական պայքարի և սպեցիֆիկյան³ անցյալ ունեցող ազդեցիկ կուսակցական գործիչներին (Ս. Սրապիոնյան (Լուկաշին), Ա. Հովհաննիսյան և այլք) իշխանությունից հեռացնելու նպատակով սկսված արշավի հետ: Այդ պայմաններում շահարկման առարկա է դառնում նաև Ալ. Մարտունու անցյալը⁴: Արդյունքում 1920-ականների վերջին-1930-ական թվականներին ստալինյան կուսակցական-ամբողջատիրական համակարգի հաստատման պայմաններում ՍԴԲՀ-ին երբևէ անդամակցած մի շարք գործիչներ ենթարկվում են հալածանքների ու բռնաճնշումների: Այդպիսով՝ Ա. Մյասնիկյանի կյանքի ու գործունեության նկատմամբ հետաքրքրությունը նվազում է մինչև 1950-ական թթ. կեսերը*:

Նշված փուլում Ա. Մյասնիկյանի կերպարի վերհանման, վաստակի արժևորման հարցում կարևոր դեր է կատարում խորհրդային պետական-կուսակցական հայտնի գործիչ Անաստաս Միկոյանը: Ի. Ստալինի մահից հետո՝ 1954 թ. մարտին, Ա. Միկոյանը Երևանում անցկացվող մի ժողովի ժամանակ խոսում է նաև Հայաստանի աշխատավորության կողմից Ա. Մյասնիկյանի լուսավոր հիշատակը սրբությամբ պահելու անհրաժեշտության մասին⁵:

Բնականաբար այդ ելույթին հաջորդում են ակտիվ քայլեր և մի քանի տարվա ընթացքում հրատարակվում են Ա. Մարտունու կյանքն ու գործունեությունը լուսա-

Մեասնիկեան (Ալ. Մարտունի) // Մարտունի Ա., (Ա. Մեասնիկեան), Կուսակցությունները գաղութահայութեան մեջ, Բերլին, 1925, էջ V-XLVIII:

¹ Կարինյան Ա. յեվ Սիմոնյան Ղ., նշվ. աշխ., էջ 49-50: Հավելենք, որ և՛ Ց. Խանգադյանի, և՛ Ա. Կարինյանի ու Ղ. Սիմոնյանի աշխատանքներում տեղ գտած միաժամանակ ՍԴԲՀ-ի և ՌՍԴԲԿ-ի կազմում աշխատելու վերաբերյալ ձևակերպումների հիմքը դեռևս 1921 թ. դրել էր հենց Ա. Մարտունին: Այն ժամանակ «խորհրդային Հայաստանում» տապաքրված Ստեփան Շահումյանին նվիրված իր փոքրիկ հուշերում նա գրել էր, որ Շահումյանին առաջին անգամ տեսել է 1907 թ. Բաքվում, երբ ինքը եղել է մեկ տարվա ստաժ ունեցող սոցիալ-դեմոկրատ բոլշևիկ և միաժամանակ աշխատել հայ կազմակերպության (ՍԴԲՀ-Վ. Հ.) և ռուսաստանյան կուսակցության շարքերում: Տե՛ս «խորհրդային Հայաստան», Ե., 1921, թիվ 184, հոկտեմբերի 2, էջ 1: Կարծում ենք՝ ներկայացվածը և այլ նման հիշատակությունները դրանց հեղինակների համար ունեին նաև հոգեբանական մերձեցման նշանակություն և ինչ-որ տեղ նպատակ էին հետապնդում կամքելու բոլշևիկների, ՌՍԴԲԿ-ի և ՍԴԲՀ-ի անցյալը:

² Փիրումյան Ս., Ալեքսանդր Ֆետոթովիչ Մեասնիկեան (Ալ. Մարտունի) // Մարտունի Ա., (Ա. Մեասնիկեան), Կուսակցությունները գաղութահայութեան մեջ, Բերլին, 1925, էջ VII, IX:

³ Խոսքը վերաբերում է այն բոլշևիկ գործիչներին, ովքեր նախկինում անդամակցել էին ՍԴԲՀ-ին:

⁴ Նշված շահարկումների դրսևորումների մեջ հարկ է առանձնացնել Սարգիս Կասյանի՝ «Սպեցիֆիկները յեվ սպեցիֆիզմը» (Թիֆլիս, 1928) աշխատանքը, որը, թեև քաղաքական-քարոզչական նպատակներ է հետապնդում, Ա. Մյասնիկյանի գործունեության վաղ շրջանին վերաբերող հատվածում պարունակում է բավականին արժեքավոր դատողություններ, (Տե՛ս Կասյան Ս., նշվ. աշխ., էջ 114-137):

* Այս տեսանկյունից բացառություն է կազմում, թերևս, միայն Արամայիս Մնացականյանը, ով 1947 թ. ներկայացնելով Ա. Մարտունու զինվորական գործունեությունը, շրջանցում է անցանկալի հարցերը, Տե՛ս Մնացականյան Ա., Ալեքսանդր Մյասնիկյանի զինվորական գործունեությունը 1917-1921 թթ. // Առանձնատիպ ՀՍՍՌ ԳԱ Տեղեկագրից, № 3, Ե., 1947:

⁵ Մնացականյան Ա., Ալեքսանդր Մյասնիկյան (Ալ. Մարտունի), էջ 6:

բանող մի շարք աշխատություններ¹: Բայց ի տարբերություն 1920-ական թվականների, այս շրջանից սկսած խորհրդահայ պատմաբանները Մյասնիկյանի կյանքն ու գործունեությունը սկսում են ներկայացնել միմիայն արժևորման, մեծարման խորհրդային տերության մեջ ընդունված ձևաչափով ու չափանիշներով՝ առավելապես շեշտը դնելով նրա գործունեության՝ 1917 թվականից հետո ընկած ժամանակաշրջանի լուսաբանման վրա: Այդպիսով՝ Ա. Մարտունու կյանքի ու գործունեության վաղ շրջանի ու հատկապես կուսակցական պատկանելության հարցերը շրջանցվում են կամ ներկայացվում խեղաթյուրված: Վերջին խմբին են պատկանում 1930-ական թթ. տխրահռչակ գրաքննադատ Ա. Ոսկերչյանի, ինչպես նաև պրոֆեսոր Ս. Ամիրյանի աշխատությունները²: Նրանցից առաջինը, նշելով Ա. Մյասնիկյանի 1906 թ. ամռանը ՌՍԴԲԿ շարքերը մտնելու մասին³, նրա՝ 1906-1910 թթ. միաժամանակ ՌՍԴԲԿ-ում և ՍԴԲՀԿ-ում աշխատելու հարցը բացատրում է գերազանցապես ռուսական միջավայրում ապրելու և աշխատելու, հայ կազմակերպության, նրա առաջնորդների մասին ճիշտ ու ամբողջական պատկերացում չունենալու հանգամանքներով⁴: Պատմաբան Ս. Ամիրյանն իր հերթին, խոսելով Ա. Մյասնիկյանի վաղ շրջանի գործունեության մասին, նշում է, որ 1903 - 1904 թվականներին նա համակրել է (այսինքն՝ ոչ անդամակցել) Դաշնակցությանը⁵: Իսկ ՍԴԲՀԿ-ի հետ կապի ու նրա կուսակցական երկվության վերաբերյալ Ս. Ամիրյանը գրում է, որ Ա. Մարտունին 1905 թ. անդամագրվել է ՍԴԲՀԿ-ին, իսկ 1906-ի ամռանը՝ ՌՍԴԲԿ-ին⁶: 1906-ից լինելով բոլշևիկյան կուսակցության անդամ՝ Ա. Մյասնիկյանը ո՛չ տեսական և ո՛չ էլ գործնական ոչ մի աշխատանք չի կատարել ՍԴԲՀԿ-ի համար, հետևաբար նրա կուսակցական կյանքը երկվություն չի ունեցել⁷: Նշված պատմաբանը սպեցիֆիկների հետ Ա. Մյասնիկյանի հետագա տարիների կապը փորձել է բացատրել ոչ թե գաղափարաքաղաքական, այլ գրական կապերով՝ սպեցիֆիկների մամուլից օգտվելու և մայրենի լեզվով հայ պրովետարիատի շրջանում աշխատելու հնարավորությամբ⁸: Ս. Ամիրյանի կարծիքով Ա. Մարտունու վարքագիծը պայմանավորված է եղել նրանով, որ ՍԴԲՀԿ-ն նա դիտել է որպես սոցիալ-դեմոկրատական շարժման ազգային ջոկատ և ոչ թե ՌՍԴԲԿ-ին հակադիր քաղաքական ուժ⁹:

Այսպիսով՝ վերը ներկայացված համառոտ ակնարկը ցույց է տալիս, որ խորհրդային շրջանում քաղաքական նկատառումներով Ա. Մյասնիկյանի վաղ շրջանի գործունեությանը վերաբերող հիշատակված հարցերը հաճախ աղավաղվել են, ինչը հնարավորություն չի տվել օբյեկտիվ ու ամբողջական պատկերացում կազմելու նրա քաղաքական հայացքների, կերպարի ձևավորման գործընթացի վերաբերյալ:

Խորհրդային Միության փլուզումից հետո հակախորհրդային տրամադրությունների տիրապետության պայմաններում բնականաբար պատմաբանների գործունեությունը ուղղվում է խորհրդահայ պատմագիտության ուշադրությունից դուրս մնացած ու խեղաթյուրված խնդիրների ուսումնասիրությանը: Սոցիալ-դեմոկրատական, հեղափոխական շարժումների, Խորհրդային Հայաստանի, ինչպես նաև խորհրդային կուսակցական-պետական Ալեքսանդր Մյասնիկյանի, Աշոտ Հովհաննիսյանի և այլոց նման գործիչների գործունեության նորովի ուսումնասիրությունը, պատմական մութ էջերի վերհանումը ընդհանուր առմամբ դուրս են մնում գիտնականների ուշադրությունից: Բայց վերջին տարիներին՝ նշված տրամադրությունների մեղմացման պայմաններում,

¹ Նույն տեղում, Դարիբջանյան Գ. Բ., նշվ. աշխ., Ալեքսանդր Մյասնիկյան 1886-1925 բիբլիոգրաֆիա, խմբ. և առաջաբանով՝ Արտ. Ոսկերչյանի, Ե., 1956 (այսուհետև՝ Ալ. Մյասնիկյան, բիբլիոգրաֆիա), Ալ. Մյասնիկյան, Ընտիր երկեր, Ե., 1957:

² Ալ. Մյասնիկյան, բիբլիոգրաֆիա, Ամիրյան Ս., Ալեքսանդր Մյասնիկյան, Ե., 1986:

³ Ալ. Մյասնիկյան, բիբլիոգրաֆիա, էջ 5:

⁴ Նույն տեղում, էջ 7, 10:

⁵ Ամիրյան Ս., նշվ. աշխ., էջ 21: Այստեղ նա օգտվել է հենց Ա. Մյասնիկյանի լրացրած անձնական թերթիկից, որտեղ վերջինս նշել էր, թե 1903-1904 թթ. համակրել է Դաշնակցության էսէռական արտահայտությանը: Տե՛ս Հայաստանի ազգային արխիվ (այսուհետև՝ ՀԱԱ), ֆ. 1435, ց. 1, գ. 70, թ. 2:

⁶ Ամիրյան Ս., նշվ. աշխ., էջ 31:

⁷ Նույն տեղում, էջ 32-33:

⁸ Նույն տեղում, էջ 33:

⁹ Նույն տեղում, էջ 33:

վերոհիշյալ խնդիրների ուղղությամբ մեծածավալ աշխատանքներ կատարելուց հետո անհրաժեշտություն է առաջացել, պատմագիտության սկզբունքներին ու մեթոդներին համապատասխան և ազգային արժեքներին ու շահերին համահունչ՝ վերանայելու նաև սոցիալ-դեմոկրատական, հեղափոխական շարժումների ու առհասարակ խորհրդային շրջանի պատմության հարցերը:

Այս տեսանկյունից ներկայացվող հոդվածը գալիս է լրացնելու նման մի փոքր բաց:

* * *

Ալեքսանդր Մյասնիկյանը ծնվել է Նոր Նախիջևանում 1886 թ. փետրվարի 9-ին առևտրական Աստվածատուր Մյասնիկյանի բազմազավակ ընտանիքում: 1890 թ. անհաջող վիրահատության արդյունքում հնգամյա Ալեքսանդրի հայրը մահանում է: Վեց երեխաների խնամքի բեռը ընկնում է մոր՝ Աննայի ուսերին: Այնուհետև հոգաբարձուների «ջանքերով» հոր պարտքերի դիմաց նրանք կորցնում են ոչ միայն հոր խանութը, այլև տունը՝ հայտնվելով ծանր վիճակում: Շուտով մահանում է նաև ավագ եղբայրը, որը, աշխատանքի անցնելով, սկսել էր օգնել մորը: Միայն հարազատների ու բարեկամների աջակցության շնորհիվ է, որ նրա ընտանիքը կարողանում է ոտքի կանգնել¹:

Ա. Մյասնիկյանը սկզբնական կրթությունը ստանում է տեղի Սուրբ Խաչ եկեղեցու դպրոցում: Ծխական ավարտելուց հետո՝ 1898 թ., նա ուսումը շարունակում է տեղի հայկական թեմական դպրոցում (սեմինարիա), որն ավարտում է 1903 թ.: Այդ ժամանակաշրջանում հայերի դրության առանձնահատկությունները, ազգային գիտակցության ձևավորմանն ու զարգացմանը նպաստող թեմական դպրոցի մթնոլորտը, դասավանդվող առարկաները կարևոր դեր են կատարում նրա ազգային դիմագծի ձևավորման և հայ կուսակցություններից ամենազդեցիկին՝ Դաշնակցությանը անդամագրվելու գործում*:

Ինչպես արդեն նշել ենք, ինքը՝ Ալ. Մյասնիկյանը, 1920-ական թթ. սկզբներին իր կուսակցական անձնական թերթիկում նշել է, որ 1903 թ. սեպտեմբերից մինչև 1904 թ. մարտը համակրել է Դաշնակցությանը²: Բայց մենք շուտով կտեսնենք, որ նա ընդամենը ՀՅԴ-ի համակիր չի եղել և 1904 թ. չի հեռացել կուսակցությունից*:

Ա. Մյասնիկյանի դասընկեր, հայտնի դաշնակցական գործիչ Սիմոն Վրացյանի հուշերից կարելի է եզրակացնել, որ Ալեքսանը (Մյասնիկյանը-Վ.Վ.) համեմատաբար ուշ է դարձել դաշնակցական և կուսակցության շարքերում մնացել ընդամենը մի քանի տարի³: Ըստ Ա. Վրացյանի՝ Ալեքսանը որոշ ժամանակ Համբարձում Տերտերյանի հետ բուռն գործունեություն է ծավալում Ռոստով-Նախիջևանում⁴: Նրանք խմբով 1903 թ. սկսում են հրատարակել «Աղավնի» վերտառությամբ աշակերտական ձեռագիր երկշաբաթաթերթ, որ որոշակի դադարով վերսկսվում է հրատարակվել 1905 թ. ամռանը⁵: Համբարձում Տերտերյանն իր հերթին հաստատում է, որ 1903 թ. ամռան ամիսներին Ա. Վրացյանի, Ալ. Մյասնիկյանի և այլոց հետ հրատարակել է «Աղավնի» անունով խմորատիպ կուսակցական- աշակերտական թերթ, որը լույս է տեսել 100 օրինակով և արագ սպառվել 10 կոպեկով⁶: Այս շրջանում Մյասնիկյանի ազգային կամ ավելի ճիշտ ազգայ-

¹ Մետրոպ Մաշտոցի անվան Մատենադարան, Աշոտ Հովհաննիսյանի ֆոնդ (այսուհետև՝ Աշ. Հովհաննիսյանի ֆոնդ), թղթ. 244²⁰, վավ. 61, թ. 9:

* Ա. Մյասնիկյանի ՀՅԴ-ին անդամագրվելու գործում, թերևս, որոշ դեր էր կատարել նաև ավագ եղբոր՝ Սահակի դաշնակցական լինելը:

² ՀԱԱ, ֆ. 1435, ց. 1, գ. 70, թ. 2:

* Վրացյանը իր հուշերում հրապարակել է մի նկար, որ թվագրված է 1903 թ. աշնանով և նրանում պատկերված են ՀՅԴ Նախնորի շրջանի առաջին՝ «Մովսես», խմբի անդամները, որոնց թվում են նաև Ալեքսանդր և Սահակ Մյասնիկյանները: Տե՛ս Վրացեան Ա., Կեանքի ուղիներով, դէպքեր, դէմքեր, ապրումներ, Պէրոյթ, 1967, էջ 55: Ուշագրավ է, որ նույն նկարը պահպանվում է նաև Ա. Մյասնիկյանի անձնական ֆոնդում, սակայն առանց թվագրման: Տե՛ս ՀԱԱ, ֆ. 1435, ց. 2, գ. 57:

³ Վրացեան Ա., նշվ. աշխ., էջ 56:

⁴ Նույն տեղում, էջ 56:

⁵ Աշ. Հովհաննիսյանի ֆոնդ, թղթ. 244²⁰, վավ. 61, թ. 22-23:

⁶ Տերտերեան Հ., Յուշեր Նոր Նախիջևանի շրջանէն, // «Վարենիք», Պոսթըն, 1955թ., № 3 (մարտ), էջ 53-54:

նական կեցվածքի մասին ուշագրավ տեղեկություն է հաղորդում նրա պատանեկության ընկերներից, մասնագիտությամբ իրավաբան Քրիստափոր Փորքեշյանը: Ըստ նրա՝ 1903 թ. Ջատկի արձակուրդին, վերադառնալով քաղաք, ինքն իմացել է, որ Ալեքսանը սկսել է հրատարակել «Աղավնի» անունով երկշաբաթաթերթը, որում հարձակում է գործել իր վրա՝ առաջարկելով մոռացության տալ ժողովրդական երգերը և տարածել Նալբանդյանի, Պատկանյանի, Շահագիզի ու այլոց հայրենասիրական երգերը¹: Ըստ երևույթին, ազգայնական տրամադրվածություն ունեցող Մյասնիկյանի համար անընդունելի է եղել անգամ Ք. Փորքեշյանի ժողովրդական երգերը պահպանելու, մեր համոզմամբ, այսօր էլ արդիական առաջարկը:

Այս պայմաններում Ա. Մյասնիկյանը 1904 թ. մեկնում է Մոսկվա՝ ընդունվելու Լազարյան ձեմարան: Նրա ձեմարանական ընկերներից Ցոլակ Խանգադյանը Մարտունուն նվիրված իր աշխատանքում գրում է, որ ձեմարան մտնելուն պես նա աչքի է ընկնում և մտնում դպրոցական «մտավորականության» շարքերը, որի առաջնորդներն էին Վահան Տեր-Գրիգորյանը (Տերյան) ու Պողոս Մակինցյանը: Ըստ նրա՝ Նոր Նախիջևանից Ա. Մյասնիկյանը բերել էր մի աշխարհայացք, որ միանգամայն ներդաշնակում էր իրենց մեջ իշխող քաղաքական ուղղությանը. իհարկե, սկզբում Ղաշնակցությունն էր ազգայինը²: Ց. Խանգադյանը պատմում է, որ տաճկահայության վիճակը, Հայոց հարցը իրենց մտահոգությունների կենտրոնն էին կազմում: Րաֆֆու, Ահարոնյանի վեպերից, պատմվածքներից ազդված՝ իրենք մինչև հիստերիայի աստիճան կարծում էին, որ մեծ նպատակին հասնելու միակ ուղին ՀՅԴ առաջարկած ուղին է³: Բայց 1904 թ-ից սկսած՝ իրենք սկսում են ազդվել նաև պրոլետարիատի գաղափարախոսությունից և հեղափոխական շարժումից, իսկ 1905 թ-ից պարզորոշ ըմբռնում են կապիտալիստական հասարակարգի կառուցվածքն ու դասակարգային ներհակասությունների, կռիվների նշանակությունը: Եվ եթե առաջ իրենց սոցիալիզմը սնվում էր գլխավորապես Բելինսկու, Պիսարևի և այլ սոցիալիստական լուսավորիչների գրվածքներով, ապա ժամանակի ընթացքում իրենք որոշ չափով ծանոթանում են նաև Մարքսին, Էնգելսին, Լասալին⁴:

Բնականաբար 1905 թ. հունվարին սկսված ռուսաստանյան հեղափոխությունը և հատկապես մոսկովյան միջավայրը, մարքսիստական գրականության ընթերցանությունը չէին կարող չազդել նրանց գիտակցության ու հայացքների վրա և պատահական չէ, որ ժամանակի ընթացքում նրանք հակվում են դեպի մարքսիզմն ու սոցիալ-դեմոկրատական շարժումը: Բայց մինչ այդ՝ մինչև 1906 թ. կեսերը, այդ երիտասարդները, այդ թվում՝ Ա. Մյասնիկյանը, շարունակում էին հավատարիմ մնալ Հայկական հարցին ու Ղաշնակցությանը: Այս առումով նշելի է, որ 1905 թ. ամռանը Ա. Մյասնիկյանը Նոր Նախիջևանում վերսկսում է դաշնակցական-աշակերտական «Աղավնի» երկշաբաթաթերթի հրատարակությունը և պայքար ծավալում Սարգիս Սրապիոնյանի կողմից հրատարակվող սպեցիֆիկյան⁵, մարքսիստական ուղղության «Նոր խոսք»

¹ Աշ. Հովհաննիսյանի ֆոնդ, թղթ. 244²⁰, վավ. 61, թ. 22-23:

² Խանգադյան Ց., նշվ. աշխ., էջ 5: Այնուհետև Ց. Խանգադյանը նշում է, որ պաշտոնապես միայն Ա. Մյասնիկյանն էր անդամագրված Ղաշնակցությանը, իրենք համակիրներ էին: Այս առումով պատահական չէ, որ Ա. Մյասնիկյանին հովանավորում էր հայտնի գրող, դաշնակցական Ավ. Իսահակյանը, Տե՛ս նույն տեղում, էջ 5, 7:

³ Խանգադյան Ց., նշվ. աշխ., էջ 6:

⁴ Նույն տեղում, էջ 7:

⁵ Այս թերթը բնութագրում ենք սպեցիֆիկյան ուղղության, քանի որ Սարգիս Սրապիոնյանը այդ շրջանում արդեն ՍԴԲԿԿ անդամ էր: Այսպես՝ նա 1920-ական թթ. սկզբին իր կողմից լրացրած կուսակցական անձնական թերթիկում նշում է, որ 1905 թ. սկզբին մտել է ՍԴԲԿԿ (բոլշևիկյան բնույթի) մինչև 1906 թ. ամառը: Տե՛ս ՀԱԱ, ֆ. 4, ց. 2, գ. 9263, թ. 9, 10: Պատմաբան Հ. Կարապետյանը Ս. Լուկաշինին նվիրած իր մենագրության մեջ ընդունում է, որ 1905 թ. սկզբից Լուկաշինը եղել է ՍԴԲԿԿ անդամ, բայց չգիտես ինչու, նշում է, որ 1906 թ. սկզբին լքել է այդ կուսակցությունը: Տե՛ս Կարապետյան Հ., Մեծ պայքարի մարդիկ, գիրք երկրորդ, Ե., 1967, էջ 12-13: Ք. Փորքեշյանը ականատեսի պատմածի հիման վրա իր հուշերում գրում է Սարգիսը Բաքվում կանգնած է եղել կուսակցության շարքերում, կատարել է իրեն տրված բազմաթիվ պատասխանատու հանձնարարություններ և խաղացել շատ կարևոր դեր: Տե՛ս Աշ. Հովհաննիսյանի ֆոնդ, թղթ. 244²⁰, վավ. 60, թ. 33: Նույն հեղինակը արդեն Հայաստանի ազգային արխիվում պահպանվող Ս. Սրապիոնյանին նվիրված իր հուշերում գրում է, որ նա 1905 թ. Բաքվի աշակերտության գլխավոր ղեկավարներից մեկն էր, աշակերտական միության նախագահը և աշակերտական թերթի խմբագիրը. երկաթե կամքի տեր էր ու համոզված մարքսիստ: Տե՛ս ՀԱԱ, ֆ. 314, գ. 13, գ. 2, թ. 6:

ծեռագիր շաբաթաթերթի դեմ¹: Ըստ Բ. Փորքեշյանի՝ երկու թերթերն էլ լույս են տեսնում մինչև օգոստոսի կեսերը, երբ Սարգիսը մեկնում է Բաքու, իսկ Ալեքսանը՝ Մոսկվա²:

Ուշագրավ է, որ դաշնակցական Մյասնիկյանը պայքարում էր մի կուսակցության դեմ, որին շուտով պետք է անդամագրվեր ու հակադրվում մի գործչի, որի հետ պետք է ընկերանար: Նորահայտ նյութերը վկայում են, որ Սարգիս Սրապիոնյանը կարևոր դեր է կատարել Ալ. Մյասնիկյանի Դաշնակցության շարքերը թողնելու և դեպի սոցիալ-դեմոկրատական շարժումը թեքվելու գործում:

Ըստ Բ. Փորքեշյանի՝ Ալ. Մյասնիկյանի ու Ս. Սրապիոնյանի մասին գրած անտիպ հուշերի 1905 թ. դեկտեմբերին կամ 1906 թ. սկզբին Նոր Նախիջևանում դաշնակցականների կողմից կազմակերպված մի ցույցից հետո Ա. Մյասնիկյանը հողային հարցի մասին մի դասախոսություն է կարդում, որի ընթացքում Ս. Սրապիոնյանը իր հարցերով³ շատ նեղ դրության մեջ է դնում նրան⁴: Ընդ որում հուշագիրը նշում է, որ Ա. Մյասնիկյանն այդ մասին իրեն անծանր է պատմել՝ ասելով, որ դա իրեն շատ է վշտացրել⁵: Այս անախոսո՞ միջադեպը խթանում է, որ Ա. Մյասնիկյանը դրանից հետո գիշեր-ցերեկ զբաղվի հասարակագիտական ու մասնավորապես սոցիալական հարցերին նվիրված գրքերի ընթերցանությամբ* և արդյունքում 1906 թ. մայիսի վերջին նա Մոսկվայում իր սենյակակից Բ. Փորքեշյանին հայտարարում է, որ որոշել է իր կապը Դաշնակցությունից կտրել ու դառնալ սոցիալ-դեմոկրատ⁶: Հունիսի սկզբին Լազարյան ճեմարանը ավարտելուց հետո Նոր Նախիջևան վերադառնալով՝ Ա. Մյասնիկյանը անմիջապես անցնում է գործի՝ այցելելով ու մտերմանալով Սարգիս Լուկաշինի հետ, որն էլ նրան մտցնում է սոցիալ-դեմոկրատական շարժման շարքերը⁷:

Այսպիսով՝ մենք տեսանք, թե ինչպիսի պայմանների ու գործոնների ազդեցությամբ են Ա. Մյասնիկյանի ընդգծված ազգային հայացքները փոփոխվում, և ինչպես է նա ազգային իղձերի իրականացման համար պայքարող Դաշնակցությունից անցում կատարում միջազգայնական գաղափարներն ընդհանուր սոցիալ-դեմոկրատական շարժման շարքերը: Ս. Լուկաշինի, Ա. Մյասնիկյանի և այլոց վկայությունները հետագայում հիմք են հանդիսացել, որ բազմաթիվ ուսումնասիրողներ իրենց աշխատություններում նշեն, թե 1906 թ. ամռանը Ա. Մյասնիկյանը, նաև Ս. Լուկաշինը Ռոստովի կազմակերպության միջոցով անցել են ՌՍԴԲԿ շարքերը՝ հարելով բոլշևիկներին⁸: Թերևս, միայն Ց. Խանգադյանն է հակառակում նրանց՝ ասելով, որ 1906 թ. ամռանը Ա. Մյասնիկյանը, դուրս գալով ՀՅԴ-ից, անդամագրվել է ՍԴԲՀ-ին, բայց այդ հանգամանքը արգելք չի հանդիսացել ՌՍԴԲԿ-ի (բոլշևիկյան թևի) հետ ևս աշխատելուն⁹: Այս հարցի ուսումնասիրությունը մեզ բերել է այն համոզման, որ Ց. Խանգադյանի

¹ Այս թերթի մեկ օրինակ պահպանվում է Հայաստանի ազգային արխիվում և դրա 14-րդ թերթի վրա 1925 թ. Աշոտ Հովհաննիսյանը ուշագրավ գրառումներ է կատարել, ինչի շնորհիվ հաստատվում են մի քանի տեղեկություններ: Մասնավորապես նա հաստատում է «Նոր խոսք»-ի և «Աղավնի»-ի միջև ընթացած պայքարի մասին տեղեկությունը ու հայտնում, որ առաջինից լույս է տեսել ընդամենը 3-4 համար, և որ բոլոր հոդվածների հեղինակը Ս. Սրապիոնյանն է եղել: Տե՛ս ՀԱԱ, ֆ. 1455, ց. 1, գ. 16, թ. 14:

² Աշ. Հովհաննիսյանի ֆոնդ, թղթ. 244²⁰, վավ. 60, թ. 31-32:

³ Բ. Փորքեշյանը Ալեքանդր Մյասնիկյանի մասին իր հուշերում նույնիսկ նշել է այդ հարցերը:

1. Ե՞րբ է ծագել հողերի սեփականության իրավունքը, համաձայն է արդյոք բանախոսը Էնգելսի այդ հարցի շուրջ արտահայտած կարծիքի հետ:

2. Ինչու՞ չխոսեցիք մունիցիպալիզացիայի մասին, ինչպիսին է ձեր վերաբերմունքը հողային հարցի այդ տեսակ լուծմանը: Ա. Մյասնիկյանը չի կարողացել տալ բավարար պատասխան, ինչը նրան շատ է վշտացրել: Տե՛ս Աշ. Հովհաննիսյանի ֆոնդ, թղթ. 244²⁰, վավ. 61, թ. 36:

⁴ Նույն տեղում, թ. 34:

⁵ Նույն տեղում, վավ. 60, թ. 34, վավ. 61, թ. 36:

* Կարծում ենք՝ դժվար չէ կռահել, որ խոսքը վերաբերում է մարքսիստական գրականությանը, ինչը բնականաբար որոշիչ դեր է կատարել նրա մարքսիստական աշխարհայացքի ձևավորման վրա:

⁶ Աշ. Հովհաննիսյանի ֆոնդ, թղթ. 244²⁰, վավ. 60, թ. 34:

⁷ Նույն տեղում:

⁸ Տե՛ս ՀԱԱ, ֆ. 4, ց. 2, գ. 9263, թ. 9, 10, ֆ. 1435, ց. 1, գ. 70, թ. 2, Աշ. Աշ. Հովհաննիսյանի ֆոնդ, թղթ. 244²⁰, վավ. 60, թ. 34, Կարինյան Ա. յեվ Սիմոնյան Դ., նշվ. աշխ., էջ 50, Մնացականյան Ա., Ալեքսանդր Մյասնիկյան (Ալ. Մարտունի), էջ 12, Դարիբջանյան Գ., նշվ. աշխ., էջ 12, Դավլաթյան Կ., նշվ. աշխ., էջ 9, Ալ. Մյասնիկյան, Երկեր (հինգ հատորով), հ. 1, էջ 5, Ամիրյան Ս., նշվ. աշխ., էջ 33 և այլք:

⁹ Խանգադյան Ց., նշվ. աշխ., էջ 9:

տեղեկությունները համապատասխանում են իրականությանը, իսկ մյուս տեսակետը թե՛ դրա սկզբնաղբյուր հանդիսացող գործիչների, թե՛ խորհրդահայ պատմագրության կողմից շրջանառության մեջ է դրվել քաղաքական նկատառումներով՝ խորհրդային հանրությանը ցույց տալու համար, որ այդ նշանավոր քաղաքական գործիչը վաղ շրջանից եղել է բոլշևիկների շարքերում: Այնինչ այդ մոտեցումը անտրամաբանական է: Դժվար է հավատալ, որ ընդգծված ազգային հայացքներ ունեցող գործիչը, ինչքան էլ որ տարված լիներ մարքսիզմով, այդքան արագ կանցներ առավել ապագային կեցվածք ունեցող բոլշևիկների կողմը: Այս տեսանկյունից ՍԴԲՀ-ն իր գաղափարական շաղախով, մոտեցումներով թե՛ Ա. Մյասնիկյանի և թե՛ նրա շրջապատի մյուս գործիչների համար բավականին հարմար հանգրվան էր, որը նրանց գիտակցության մեջ առկա հին՝ ազգային, ու նոր՝ միջազգային, մարքսիստական հայացքների, համոզմունքների միջև փոխգիշուձային, համադրելի միջավայր ձևավորելու հնարավորություն էր ընձեռում: Կարծում ենք՝ ասվածը սպեցիֆիկներին հարելու Ա. Մյասնիկյանի և մյուսների ներքին, կարևոր պատճառներից էր: Եվ վերջապես կան մի շարք փաստեր, որոնք վկայում են, որ Ա. Մյասնիկյանը մինչև 1910-ական թթ. սկզբները գործել է ՍԴԲՀ շարքերում: Դրան հակառակ՝ բոլշևիկների շարքերում նրա գործունեության մասին փաստեր չկան՝ բացառությամբ այն հայտնի տեղեկության, թե Ա. Մյասնիկյանը միաժամանակ գործել է և՛ ՍԴԲՀ, և՛ ՌՍԴԲԿ շարքերում, առնչություններ է ունեցել Ստ. Շահումյանի հետ:

Այսպիսով՝ մինչև ՍԴԲՀ շարքերում նրա գործունեության վերաբերյալ փաստերին անդրադառնալը փորձենք մեկնաբանել վերոնշյալ տեսակետը: Հարկ է նշել, որ այս հարցում խորհրդահայ պատմագրությունը, քաղաքականացվածության բարձր մակարդակ ցուցաբերելով, հայտնվել է տարօրինակ վիճակում: Մի կողմից՝ լռության մատնելով մի շարք իրողություններ՝ խորհրդահայ պատմաբանները բազմաթիվ էջեր են լրացրել՝ ներկայացնելու սպեցիֆիկների դեմ բոլշևիկների մղած վճռական ու հետևողական պայքարը, առաջինների ազգայնական էությունը և այլն, մյուս կողմից՝ փորձել են առկա սկզբնաղբյուրների հետ փոխգիշուձ գտնելու համար նշել, որ բոլշևիկ Ա. Մյասնիկյանը միաժամանակ գործել է և՛ ՍԴԲՀ, և՛ ՌՍԴԲԿ շարքերում:

Խնդրո առարկա ժամանակաշրջանի մասին խոսելուց առաջ նախ նշենք, որ Ա. Մյասնիկյանը 1906 թ. սեպտեմբերին մեկնում է Մոսկվա՝ ուսանելու տեղի համալսարանի իրավաբանական ֆակուլտետում, սակայն հեղափոխական գործունեության պատճառով 1906 թ. վերջերին արտաքսվում է այնտեղից: Վերադառնալով Այսրկովկաս՝ Ա. Մյասնիկյանը դեկտեմբերին հաստատվում է Բաքվում, որտեղ էլ գործում է մինչև 1908 թ. աշունը: Այնուհետև նա նորից մեկնում է Մոսկվա և շարունակելով ուսումը՝ 1911 թ-ին 1-ին կարգի դիպլոմով ավարտում նշված բուհի իրավաբանական ֆակուլտետի տնտեսագիտական բաժինը:

1905-1906 թթ. ՍԴԲՀ-ն Այսրկովկասում ու հատկապես Բաքվում բավականին ամրապնդելով իր դիրքերը՝ 1906 թ. հունիսին որոշակիորեն չափավորում է ՌՍԴԲԿ-ի հետ միավորման վերաբերյալ իր կողմից առաջարկված պայմանները*։ Արդյունքում ՌՍԴԲԿ Բաքվի միջոցառողական խորհուրդը, չնայած երկու կուսակցությունների միջև առկա մրցակցային, լարված հարաբերություններին, հանդես է գալիս ՍԴԲՀ-ի հետ համագործակցության նախաձեռնությամբ: Այդպիսով՝ սկիզբ է առնում ՍԴԲՀ և ՌՍԴԲԿ բոլշևիկյան թևի հարաբերությունների բարելավման գործընթացը, որի արդյունքում արդեն 1906 թ. աշնանը Պետական դումայի ընտրությունների ժամանակ նրանք Բաքվում հանդես են գալիս համատեղ նախընտրական դաշինքով: Հարաբերությունների հետագա զարգացումը բերում է նրան, որ ՌՍԴԲԿ 5-րդ համագումարը (1907 թ. գարուն) բոլշևիկների և բունդականների աջակցությամբ ընդունում է երկու կուսակցությունների

* Այս մասին ավելի մանրամասն Տե՛ս մեր «Սոցիալ-դեմոկրատական բանվորական հայ կազմակերպության ձևավորումն ու առաջին քայլերը» (Ե., 2015 թ.) աշխատության 102-118 էջերը:

միավորման պայմանների նախագիծը՝ կենտկոմին հանձնարարելով հնարավորին արագ իրականացնել այդ միավորումը¹:

Բայց 1908 թ. փետրվարին ՌՍԴԲԿ կովկասյան կազմակերպությունների 5-րդ համագումարը, որտեղ բացարձակ մեծամասնություն էին կազմում վրաց մենշևիկները, անընդունելի ու աննպատակահարմար է համարում ՌՍԴԲԿ ու ՍԴԲՀԿ միավորման լոնդոնյան համագումարի ընդունած պայմանների նախագիծը՝ դրա փոխարեն ՍԴԲՀԿ կազմակերպություններին առաջարկելով ձուլվել ՌՍԴԲԿ մեջ և ընդամենը տեղական կազմակերպություններին կից ունենալ հայկական սեկցիաներ²: Թեև 1909 թ. սկզբին ՌՍԴԲԿ կենտկոմի փարիզյան պլենումը նորից անդրադառնում է կուսակցությունների միավորման հարցին, գործընթացը ձախողվում է³:

Ահա այս սպեցիֆիկա-բոլշևիկյան համագործակցության շրջանը համընկնում է Ալ. Մյասնիկյանի՝ Բաքվում ակտիվ կուսակցական գործունեություն ծավալելու շրջանին, և որևէ տարօրինակ բան չկա նրա հայտնած տեղեկություններում, թե ինքը հանդիպել, գործել է Ստ. Շահումյանի հետ: Կարծում ենք՝ միայն մեկ հստակեցում է պետք անել, որ նա ոչ թե միաժամանակ աշխատել է և՛ ՍԴԲՀԿ, և՛ ՌՍԴԲԿ շարքերում, այլ լինելով ՍԴԲՀԿ անդամ՝ երկու կուսակցությունների համագործակցության պայմաններում աշխատել է նաև Բաքվի բոլշևիկների հետ: Այս առումով ամենևին էլ պատահական չէ, որ անգամ 1914 թ. Դ. Անանունի դեմ գրած իր հոդվածում նույն Ստ. Շահումյանը Ա. Մարտունու վերաբերյալ ակնարկում է, թե նա դեռևս սպեցիֆիկ է⁴: Այսինքն՝ մի բոլշևիկ, ով փայլուն ճանաչում էր Բաքվի գործիչներին, բոլշևիկներին Ա. Մարտունու մասին խոսում է որպես սպեցիֆիկ:

Արդեն 1907 թ. փետրվարին սպեցիֆիկյան «Բանուր» թերթի առաջին ու միակ համարում Ա. Մարտունին հանդես է գալիս «Մեր իրականությունից» վերնագրով հոդվածով⁵: Նույն թվականին ՍԴԲՀԿ-ն հայերենով հրատարակում է «Մայիսի մեկը» վերտառությամբ հոդվածների ժողովածու, որտեղ Նարիման Տեր-Ղազարյանի, Դավիթ Անանունի, Միքայել Բաղդատյանի, Նեոֆիտի (թերևս Հակոբ Հովհաննիսյան) հետ մեկտեղ, «Ռամկավարական հանրապետություն» վերտառությամբ հոդվածով հանդես

¹ Пятый (Лондонский) съезд РСДРП, протоколы, М., 1963, с. 589. Ուշագրավ է, որ համագումարի քսանչորսերորդ (1907 թ. մայիսի 14 (27)) նիստում ՍԴԲՀԿ-ի անունից ելույթով հանդես եկած Լեյբը (Ղ. Տեր-Ղազարյանը), երկար խոսելով Հայկական հարցի, ազգային կուսակցությունների և այլնի մասին, նշում է, որ ամենօրյա պայքարի ընթացքում իրենք հանդիպել են եղբայրական ՌՍԴԲԿ-ին, որի կազմակերպությունների հետ այլևս նախկին սուր հարաբերությունները չկան, ընդհակառակը, իրենք հաճախ միասնական են հանդես գալիս, բայց այժմ անհրաժեշտ է, որ երկու ուժերի միջև վեճերը բացառվեն: Տե՛ս Пятый (Лондонский) съезд РСДРП, протоколы, М., с. 448–449:

² ՀԱԱ, ֆ. 1021, ց. 2, գ. 29, թ. 1, Галоян Г., Рабочее движение и национальный вопрос в Закавказье 1900-1922 гг., Ер., 1969, с. 114.

³ Սովետական Միության կոմունիստական կուսակցությունը համագումարների, կոնֆերանսների և կենտկոմի պլենումների բանաձևերում և որոշումներում, 1898-1917, հ. 1, Ե., 1985 (այսուհետև՝ ՍՄԿԿ-ն... բանաձևերում և որոշումներում, հ. 1,), էջ 413:

⁴ Խոսելով ազգային մշակութային ինքնավարության ծրագրին Դ. Անանունի նոր ծանոթանալու մասին՝ Ստ. Շահումյանը նշում է, որ այդ ծրագիրը նոր չէ, ինչպես Դ. Անանունի բացատրեց և նրա բարեկամ Ա. Մարտունին «Մշակ»-ի մեջ: Բայց գտնվում են «սպեցիֆիկներ», որոնք հավատարիմ մնալով իրենց սպեցիֆիզմին, դասակարգային-կազմակերպչական խնդիրներում հանդես են գալիս այսօր Դ. Անանունի ազգային ծրագրի դեմ (օրինակ՝ մեր հոդվածում մի անգամ արդեն հիշված Ա. Մարտունին): Այդ տեսակետների վերաբերյալ մենք կարող ենք միայն ասել, որ նրանք հետևողականորեն չեն: Թույլ ենք տալիս մեզ հավատացնել նրանց, որ իսկական «սպեցիֆիկը» Դավիթ Անանունն է: Եթե նրանք լուրջ և մինչև վերջ մտածեն իրենց դավանանքների մասին, ապա կա՛մ պետք է ամեն բանում համաձայնեն Դ. Անանունի հետ, կա՛մ բոլորովին երես դարձնեն «սպեցիֆիզմից»: Ուրիշ էլք չկա, ուրիշ ընտրություն չկա նրանց համար: Տե՛ս Շահումյան Ստ., Ազգային-կուլտուրական ավտոնոմիայի մասին, // Երկերի լիակատար ժողովածու (ԵԼԺ), հ. 2, Ե., 1976, էջ 417, 422, 423: Ինչ վերաբերում է Ստ. Շահումյանի կողմից հիշատակված Ա. Մարտունու հոդվածին, ապա նրա մեջ Ա. Մյասնիկյանը Դ. Անանունին ընդամենը հանդիմանել էր, որ ժամանակի տարամերժ հովերով տարվելը քիչ պատիվ է բերում: Տե՛ս «Մշակ», Թիֆլիս, 1913, թիվ 256, նոյեմբերի 16, էջ 3:

⁵ Ալեքսանդր Մյասնիկյան, Երկեր հինգ հատորով, հ. 1, էջ 11-12: Այս հոդվածում ներկայացնելով հեղափոխության ընթացքում հայ մանր բուրժուազիայի քայլերը՝ սքողված կերպով ակնարկելով նրա ներկայացուցիչ ՀՅԴ-ին, Ա. Մարտունին նշում է, որ գիտակից հայ պրոլետարիատը աշխատում է, որ պրոլետարական դեռ քնած բանակը ըմբռնի ներկայի հեղափոխության նշանակությունը և ոտքի կանգնելով անի այն, ինչ չի արել մանր ու խոշոր բուրժուազիան: Նշենք, որ հայ պրոլետարիատին, նրա քաղաքական գիտակցությանը ու վարքագծին Ա. Մյասնիկյանի տված գնահատականը բնութագրական է հենց սպեցիֆիկներին:

է գալիս Ա. Մյասնիկյանը¹: Նշենք, որ այդ ժողովածուն ՍԴԲՀ Բաքվի կոմիտեի պաշտոնական հրատարակությունն էր, որի աշխատանքներին մասնակցել էին միմիայն այդ կուսակցության անդամները²:

1907 թ. հունիսերեքյան պետական հեղաշրջումից հետո ինչպես մնացած հեղափոխական կուսակցությունները, այնպես էլ ՍԴԲՀ-ն հայտնվում է ծանր դրության մեջ: Նրա անդամները ենթարկվում են հալածանքների, փակվում են պարբերականները, կուսակցության ներսում առաջանում են հոռետեսական տրամադրություններ: Իսկ ՌՍԴԲԿ-ի հետ միավորման գործընթացի ձգձգումը, նրա անդրկովկասյան կազմակերպությունների համագումարի կողմից միավորման համար նոր պայմանների առաջադրումը, կուսակցության ներսում առաջացնում են տարածայնություններ:

Նշելի է, որ ՍԴԲՀ 1908-1911 թթ. գործունեության և հատկապես ներկուսակցական կյանքի մասին հիմնական տեղեկատվություն մենք քաղում ենք Ա. Մյասնիկյանի և նրա ընկերների նամակագրությունից: Մասնավորապես պահպանվել են երեք նամակներ. Վ. Տերյանի՝ Ց. Խանգադյանին, Ալ. Մյասնիկյանի՝ Ց. Խանգադյանին և Արտաշես Կարինյանի՝ Ա. Մյասնիկյանին, որոնց ուսումնասիրությունը միանշանակորեն վկայում է, որ նրանք ՍԴԲՀ անդամներ են, և նրանց գործունեության առանցքը հենց այդ կուսակցությունն է:

Այսպես՝ Վ. Տերյանը Թիֆլիսից Ց. Խանգադյանին 1908 թ. ապրիլի 17-ին ուղղված նամակում գրում է. ««Գործը»* փակել են, Բ. Իշխանյանը բանտարկված է: Ռեակցիան այստեղ ավելի ևս զգալի է, թեև արտահայտվում է այլ կերպ»³: Ց. Խանգադյանին ուղղված մեկ այլ՝ մայիսի 3-ի նամակում նա հայտնում է. «Մեր ընկերներից այստեղ միայն Եսալեմին (Գ. Կոզիկյան-Վ.Հ.) եմ տեսնում, սակայն կուսակցական կյանքը բոլորովին մեռած է այդտեղ, իսկ այդ ընկերը, խեղձը, անգործ թափառում է «Գործի» փակվելուց հետո: Բաշխիի (Իշխանյան-Վ.Հ.) գործը բավականին բարդանում է...»⁴:

Ա. Մյասնիկյանի՝ Ց. Խանգադյանին ուղղված նամակը (1908 թ. հունիսի 20-ի)⁵ բովանդակային առումով բաղկացած է հոռետեսական և լավատեսական շերտերից: Առաջինում հեղինակը գրում է, որ Բաքվում հայ սոցիալ-դեմոկրատիա գոյություն չունի, որ մտավորականությունը ճգնաժամի է ենթարկված, ֆինանսներ չկան, գործուն ուժերը հեռացել են քաղաքից, Հայ կազմակերպության կենտկոմը ոչինչ չի անում և այլն⁶: Իսկ լավատեսական հատվածում նա ներկայացնում է, որ ինքն ու Ա. Կարինյանը, բացի տեղական մարմնից (խոսքը ՍԴԲՀ Բաքվի կոմիտեի մասին է- Վ. Հ.) և կենտրոնական կոմիտեից, ամեն օր ժողովներ են գումարում, մանավանդ Բիբի-Հեյբաթում գործը քիչ-քիչ առաջ մղում և այլն: Ա. Մյասնիկյանը նաև նշում է, որ կազմակերպության մեջ բոլոր չաշխատող ուժերին դուրս քշելու նպատակ ունեցող մի նոր հոսանք է առաջացել, որ իրենք արդեն կենտկոմին ևս քնից սթափեցնում են, և գործերը, ըստ երևույթին, լավանում են և այլն⁷:

Իսկ երրորդը՝ Ա. Կարինյանի՝ Ա. Մյասնիկյանին ուղղված նամակն է (1911 թ. նոյեմբեր), որում հեղինակը ներկայացնում է ՌՍԴԲԿ հետ միավորման հարցի կապակցությամբ Հայ կազմակերպության ներսում տեղի ունեցած գործընթացները: Մասնավորապես այս նամակից պարզվում է, որ ՌՍԴԲԿ կովկասյան մարմինների 5-րդ համագումարի (1908 թ. փետրվար) առաջադրած նոր պայմաններին ի պատասխան՝ ՍԴԲՀ ներսում ձևավորվել էր երեք խմբավորում: Դրանցից առաջինը, որը հարաբերական

¹ ՀԱԱ, ֆ. 1455, ց. 1, գ. 46, թ. 17-21:

² ՀԱԱ, Материалы фондов Центрального государственного архива Грузинской ССР, Коллекция 3, СА-77, ф. 94, д. 135, с. 1-70:

* Խոսքը վերաբերում է սպեցիֆիկյան «Գործ» երկշաբաթաթերթին, որը լույս է տեսել 1908 թ. փետրվար-մարտ ամիսներին (ընդամենը 4 համար) Թիֆլիսում:

³ Տերյան Վ., Երկերի ժողովածու, Ե., 1963, հ. 3, էջ 187:

⁴ Նույն տեղում, էջ 195:

⁵ ՀԱԱ, ֆ. 1435, ց. 1, գ. 5, թ. 1-3: Նույն նամակը ոչ ամբողջական, Տե՛ս Ալ. Մյասնիկյան, Երկեր, հ. 5, Ե., 2007, էջ 470-471, Խանգադյան Ց., Հոդվածների ժողովածու, Ե., 1963, էջ 121-123:

⁶ ՀԱԱ, ֆ. 1435, ց. 1, գ. 5, թ. 2:

⁷ Նույն տեղում թ. 2-3:

մեծամասնություն էր կազմում, դեմ էր այդ պայմաններով միավորմանը (Դ. Անանուն, Ն. Տեր-Ղազարյան և այլք), երկրորդը՝ անխոս կողմ էր (Ալ. Ռուբենի*, Ա. Մարտունի), իսկ երրորդ խումբը, որի ակտիվ անդամներից էր նամակի հեղինակ Արտաշեսը, միջանկյալ դիրք էր գրավում: Վերջինս ցանկանում էր միանալ ու ՌՍԴԲԿ ներսում ձևավորել իր էությանը Հայ կազմակերպությանը նման ինքնավար մի մարմին և այլն¹:

Մեր հիմնական խնդրից դուրս է ՍԴԲԿ-ի ներկուսակցական կյանքի հետագա զարգացումների մանրամասները ներկայացնելը*, միայն նշենք, որ դրանց արդյունքում, թերևս, 1911 թ. վերջերին ՍԴԲԿ-ն քայքայվում է: Նրա անդամների մի մասը հարում է բուլշևիկներին ու մենշևիկներին, բայց պահպանվում է մի կորիզ, որի շուրջը, անկախ իրենց կուսակցական պատկանելությունից, համախմբվում և 1911-1914 թթ. ակտիվ գիտամշակութային գործունեություն են ծավալում ՍԴԲԿ-ի նախկին անդամները: Այդ ժամանակահատվածում նրանք հանդես են գալիս միայն որպես հայ սոցիալ-դեմոկրատների, հրապարակախոսների, մտավորականների խումբ**։ Հավելենք, որ թե՛ ՌՍԴԲԿին հարած նախկին ՍԴԲԿ անդամները, այդ թվում՝ Ալ. Մյասնիկյանը, ու թե՛ մնացածները հետագա տարիներին, չնայած քաղաքական, կազմակերպական, մարտավարական հարցերի շուրջ իրենց միջև առկա տարածայնություններին, միմյանց թշնամաբար չեն վերաբերվում², իրար դեմ սուր քննադատական հողվածներ չեն գրում* և պահպանում են որոշակի ներքին միջանձնային կապ, ինչը առավել ցայտուն է դրսևորվում Հայաստանում խորհրդային կարգերի հաստատմանը հաջորդած տարիներին:

Այդ փուլում Ա. Մարտունու գործունեության վերաբերյալ նշենք, որ, թեև նա իր հայացքներով ավելի մոտ էր կանգնած բուլշևիկներին, 1911 թ. հոկտեմբերից մինչև 1912 թ. նոյեմբեր ամիսը, ծառայելով ռուսական բանակում³, բայց 1912-1914 թթ. Մոսկվայում աշխատելով որպես երդվյալ հավատարմատարի օգնական, առանձնապես քաղաքական ակտիվությամբ աչքի չի ընկնում: Բայց դրա հետ մեկտեղ նա բավականին ակտիվորեն մասնակցում է վերոհիշյալ հայ սոցիալ-դեմոկրատների՝ խմբակի գիտամշակութային աշխատանքներին: Ասվածի վկայությունն են «Նոր կեանք»-ում տպագրված «Հասարակական դասակարգի մասին» հողվածաշարը⁴, «Մեր ուղին»

* Ալ. Ռուբենու և Ալ. Մյասնիկյանի փոխհարաբերությունների մասին հարկ է նշել, որ Ա. Մյասնիկյանը մեծ սեր և հարգանք է տածել Ալ. Ռուբենու նկատմամբ և լիովին գտնվել է նրա ազդեցության տակ: Այս մասին հետաքրքիր են Շ. Կուրդիյանի հուշերը: Նա նշում է. «Ալներև էր, որ Ալ. Մյասնիկյանը սիրում էր, օ~ շատ սիրում Ռուբենուն, և սրտանց ցանկանում, որ ես էլ ձեռնպահ չմնամ... ինձ զբաղեցնում էր այն չտեսնված սերն ու համակրանքը, որ Մյասնիկյանը տածում էր դեպի նա և մի րոպե անգամ չէր կարողանում հանդուրժել, որ մեկը կարող է չհիանալ Ռուբենիով», Տե՛ս Ե. Չարենցի անվան գրականության և արվեստի թանգարան, Շ.Կուրդիյանի ֆոնդ, թղթ. II-31, թ. 3-4: Այս առումով նաև պատահական չէ 1922 թ. Աշ. Հովհաննիսյանի ջանքերով Երևանում Ա. Ռուբենու արձանի կանգնեցումը (Տե՛ս ՀԱԱ, ֆ. 1191, ց. 13, գ. 67, թ. 125) և նրա երկերի ժողովածուի հրատարակման նախապատրաստումը: ՀԿ(Բ)Կ ԿԿ նախագահության 1923 թ. հունվարի 23-ի նիստի որոշումը Ս. Շահունյանի և Ծատուրյանի / Ռուբենու/ ստեղծագործությունները հրատարակելու մասին: Ընտրելու, համակարգելու և խմբագրելու պարտականությունը դրվում է առաջինին՝ Ա. Կարինյանի, երկրորդին՝ Ա. Մյասնիկյանի վրա: Հանձնարարվում է պատրաստել հրատարակության և զեկուցել ԿԿ-ին: Տե՛ս ՀԱԱ, ֆ. 1, ց. 3, գ. 7, թ. 4:

¹ ՀԱԱ, ֆ. 1435, ց. 3, գ. 7, թ. 21:

* Այդ մասին առավել մանրամասն Տե՛ս մեր՝ պատմական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսության 100-104 էջեր («Սոցիալ-դեմոկրատական բանվորական հայ կազմակերպության ձևավորումն ու գործունեությունը 1900-1921 թթ.» (Ե., 2010))

** Ցարական գրաքննության պայմաններում հայ սոցիալ-դեմոկրատների խմբակին, այդուհանդերձ, հաջողվում է 1911-1912 թթ. Բաքվում հրատարակել «Կոչ», (1911 թ.) և «Նոր կեանք» (1911-1912 թթ.) երկշաբաթաթերթերը, «Մեր ուղին» հանդես-ժողովածուն (1912), Մոսկվայում՝ «Գարուն» (1910-1912 թթ.) գրական-գեղարվեստական ամսնամախը (3 համար):

² Ասվածի վկայությունն է Արտաշես Կարինյանի վերը հիշատակված մամակը, որտեղ նա գրում էր. «Թերթը («Նոր կեանք»-Վ.Հ.) ապաֆրակցիոնիստական մի թերթ է, որը համախմբել է իւր շուրջ թէ՛ Ռ.Վ. (ՌՍԴԲԿ - Վ.Հ.), թէ՛ Հ.Կ. (ՍԴԲԿ - Վ.Հ.) ընկերներին: Նախատակները միևնոյնն են, ինչ որ Կոչում: Կա մի խմբակ, որը ընտրել է իւր միջից խմբագր.[ություն]: Այդ խմբակը կազմակերպել եւ կազմակերպում է երեկոյթներ, դասախոսութիւններ: Բոլորը գործում են, յարգում են միմեանց - եւ յամենայն դեպս, չկան ... աչքեր, տաղտկալի ժպիտներ: Տե՛ս ՀԱԱ, ֆ. 1435, ց. 3, գ. 7, թ. 21:

* Այս առումով բացառություն է Բախչի Իշխանյանը, որի նկատմամբ բացի Դ. Անանունից ու Շ. Կուրդիյանից, հակակրանք են ունեցել Հայ կազմակերպության շատ անդամներ, ինչը արտահայտել են մամուլում, հրապարակախոսության մեջ:

³ ՀԱԱ, ֆ. 1435, ց. 3, գ. 3, թ. 2:

⁴ «Նոր կեանք», 1911, թիվ 1-2, դեկտեմբերի 11, էջ 53-68, 1912, թիվ 3-4, փետրվարի 19, էջ 176-18:

ժողովածու-հանդեսում «Արդի տնտեսական կեանքը Ռուսաստանում»¹, Մոսկվայում հրատարակված «Գարուն» ամսանախում «Հ. Հովհաննիսեանի և Ալ. Ծատուրեանի բանաստեղծութիւնների հասարակական արժէքը» հոդվածները և այլն²:

Եվ վերջապես 1914 թ. հուլիսին՝ Առաջին աշխարհամարտի նախաշեմին, Ա. Մյասնիկյանը գորակոչվում է բանակ: Այնտեղ նրա ծավալած քաղաքական գործունեության մասին մենք տեղեկություններ չունենք մինչև 1917 թ., երբ ապրիլի 5-ին որպես ընտրիչ նա գնդից գործուղվում է Մինսկ՝ մասնակցելու Արևմտյան ճակատի պատգամավորների համագումարին: Իսկ նոյեմբերի 2-ին Արևմտյան ճակատի զինվորների 2-րդ ճակատային համագումարի կողմից ընտրվում է գլխավոր հրամանատարի պաշտոնում՝ անցնելով Արևմտյան ճակատի բանակների հրամանատարի պարտականությունների կատարմանը³:

Կարծում ենք, որ Ա. Մյասնիկյանը կազմակերպական տեսանկյունից բոլշևիկների շարքերը անցել է 1916 թ. վերջին -1917թ. սկզբին: Համենայն դեպս, 1916 թ. նոյեմբերի 20-ին ցարական բանակում բարեխիղճ ծառայության համար նա ստացել է «Սուրբ Ստանիսլավի» 2-րդ աստիճանի պարգև, իսկ ապրիլին՝ որպես հեղափոխության մեջ ներգրավված գործիչ, իր գնդից գործուղվել Մինսկ՝ մասնակցելու նշված համագումարին: Բացի այդ՝ նույն թվականի օգոստոսին Ստ. Շահումյանի խմբագրությամբ Բաքվում լույս տեսնող «Սոցիալ-դեմոկրատ» թերթը ջերմորեն ողջունում է Ա. Մարտունուն՝ նշելով, որ նա հեռավոր հյուսիսում աշխատել է հեղափոխական սոցիալ-դեմոկրատիայի շարքերում և այսօր իրենց հետ է⁴:

Այսպիսով՝ հանրագումարի բերելով վերոշարադրածը՝ Ա. Մյասնիկյանի հասարակական-քաղաքական գործունեության մինչբոլշևիկյան շրջանը կարելի է բաժանել երկու լիարժեք և մեկ միջանկյալ փուլերի. դաշնակցական (1903-1906 թթ. կեսեր), սպեցիֆիկյան (1906 թ. կեսեր- 1911 թ.) և միջանկյալ (1911-1916 թ. վերջ-1917 թ. սկիզբ): Հայերի ազգային շահերի տեսանկյունից գնահատելով Ա. Մարտունու քաղաքական հայացքների էվոլյուցիան՝ պետք է արձանագրել, որ այն աստիճանաբար ընթացել է աննպաստ ուղղությամբ՝ ընդգծված ազգայինից դեպի միջանկյալ սպեցիֆիկյանը, ապա ապազգային-բոլշևիկյանը: Բայց, այդուհանդերձ, կարծում ենք, որ վերջին փուլում անգամ նրա հայացքներում մեծ, իսկ ժամանակ առ ժամանակ էլ որոշիչ դեր են կատարել ազգային տարրեր պարունակող սպեցիֆիկյան հայացքները:

Ваагн Акопян, Добольшеви́стский период общественно-политической деятельности Александра Мясни́кяна, -Статья посвящена деятельности известного советского партийного и государственного деятеля Александра Мясни́кяна, его общественно-политическим взглядам до вступления в большевистскую партию. Эти вопросы десятилетиями искажались или умалчивались по политическим соображениям.

Добольшеви́стский период общественно-политической деятельности А.Мясни́кяна делится на два основных и один промежуточный этапы: Армянская Революционная Федерация Дашнакцутюн (1903-середина 1906), Специфистский (середина 1906-1911) и промежуточный (1911-конец 1916 или начало 1917). Эволюция политических взглядов А.Мясни́кяна протекала поэтапно: от национального до промежуточного Специфистского, а в конце - антинационально-большеви́стского. Позже во взглядах и в деятельности Александра Мясни́кяна отражались, а иногда играли решающую роль его специфистские взгляды, в которых содержались национальные элементы.

¹ «Մեր ուղին», Բաքու, 1912, էջ 66-98:

² «Գարուն» ամսանախ, Մոսկվա, 1912, էջ 133-163:

³ ՀԱԱ, ֆ. 1435, ց. 3, գ. 3, թ. 3: Բանակում Ա. Մարտունու ռազմական գործունեության մասին տեղեկությունները ևս առատ չեն, բայց բարեխիղճ ծառայության և այլ հիմնավորումներով հրամանատարության կողմից նրա ստացած Սուրբ Ստանիսլավի 3-րդ (1915 թ. մայիսի 20), Սուրբ Աննայի 3-րդ (1916 թ. ապրիլի 20) և Սուրբ Ստանիսլավի 2-րդ (1916 թ. նոյեմբերի 20) աստիճանների պարգևները վկայում են, որ հրամանատարությունը գոհ է եղել նրա ծառայությունից: Տե՛ս ՀԱԱ, ֆ. 1435, ց. 3, գ. 3, թ. 2-3:

⁴ Ստ. Շահումյան, ԵԼԺ, հ. 3, Ե., 1978, էջ 211:

Vahagn Hakobyan, Pre-bolshevik period of Alexander Myasnikyan's social-political activity,- In the article are discussed some issues concerning formation of the social-political views and activity of the outstanding member of Bolshevik party and state figure Alexander Myasnikyan, before his entry into the Bolshevik party. These issues had been distorted or concealed for a long time because of political reasons.

As a result of a relevant study A. Myasnikyan's social and political activity during pre-Bolshevik period is divided into two full and one intermediate stages: the Armenian Revolutionary Federation-D (1903-1906) Specifist's (1906-1911) and intermediate (1911 to end of 1916 or the beginning of 1917). Assessing from the standpoint of the Armenian national interests, the evolution of A. Martuny's political views proceeded gradually from national to intermediate Specifist and finally to anti-national-Bolshevik. Nevertheless, even at the end of the mentioned period Alexander Myasnikyan's viewpoints and activity played a decisive role in his Specifist's views, which contained national elements.